



Մամլո հաղորդագրություն

Սեպտեմբերի 20, 2021

## **ՔՈԱՖ-ն ու ԱՅԱԸ-ն նոր զարկ են տալիս Լոռու մարզում կաթնամթերքի արտադրությանը**

**ԵՐԵՎԱՆ — Սեպտեմբերի 17-ին «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) և Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության (ԱՅԱԸ) Հայաստանի մասնաճյուղը** չորսամյա փոխըմբռնման հուշագիր ստորագրեցին Լոռու մարզի 6 համայնքներում (Վահագնի, Եղեգնուտ, Դսեղ, Դեբետ, Չկալով, Ձորագյուղ) կաթնամթերքի արտադրությունը բարելավելու և ընդլայնելու նպատակով:

Բարելավելով արոտավայրերը և անասնակերի արտադրությունը մարզում՝ նախագիծը նպատակ ունի նպաստելու բարձրորակ և բարձրաժճեք կաթի արտադրության աճին՝ արտադրությունից մինչև շուկա, ինչպես նաև ապահովելու արժեշղթայի կայունություն և գյուղական բնակավայրերի համար կայուն եկամուտներ:

Համաձայնագրի ստորագրմանը, որը կայացավ Լոռու ՔՈԱՖ ՍՄԱԲԹ կենտրոնում, ներկա էին «Ռազմավարական Չարգացման Գործակալություն» (SDA) ՀԿ-ի, «Բնության համաշխարհային» հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF Հայաստան), «Հայկական Կարիտաս»-ի, «ԱՄՔՈՐ»-ի ներկայացուցիչներն ու ծրագրի շահառու գյուղերի համայնքապետերը:

Տնտեսական զարգացումը ՔՈԱՖ-ի ծրագրերի ուղղություններից մեկն է, որ նպաստում է գյուղական համայնքներում ընդհանուր սոցիալ-տնտեսական միջավայրի բազմակողմանի զարգացմանը: ՔՈԱՖ-ը նախկինում իր տնտեսական ծրագրերի շրջանակում համագործակցել է ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի (ՄԱՉԾ) հայաստանյան գրասենյակի հետ, ինչի արդյունքում հատապտուղների սերմեր, կաթիլային ոռոգման համակարգ տրամադրելու և 50 տնային տնտեսությունների՝ հատապտուղների աճեցման և մշակման առանձնահատկություններ սովորեցնելու միջոցով Լոռու մարզում ձևավորվել է ազնվամորու արժեշղթա:

Հիմնվելով նախորդ ծրագրի հաջողությունների վրա՝ ՔՈԱՖ-ը ցանկանում է այս մոդելը կիրառել նաև Հայաստանի կաթնարտադրության թերզարգացած ոլորտ ունեցող շրջաններում: ԱՅԱԸ-ի հետ համատեղ ջանքերով ՔՈԱՖ-ը կկարողանա համապարփակ ազդեցություն թողնել Լոռու կաթնամթերքի արտադրության ոլորտում՝ նորարական մեթոդներով օպտիմալացնելով գոյություն ունեցող 4 բիզնեսներ: Միաժամանակ, կհիմնվեն կաթնամթերքի 2 նոր բիզնեսներ, որոնք կօգտվեն կենդանիների վերարտադրողականության բարձրացման նախաձեռնությունից: Կաթի բարձրացված որակը նոր բիզնեսներին հնարավորություն կտա բարելավել անասնապահությունը, արտադրել բարձրորակ պանիր և մրցունակ դառնալ տեղական ու միջազգային շուկայում:

Նախագծի շրջանակներում տեղացի գյուղատնտեսները նաև ձեռք կբերեն նոր հմտություններ՝ կենդանիների արհեստական բեղմնավորումից մինչև եգիպտացորենի, կորնգանի և առվույտի դաշտերի մշակում: Գործընկերների գնահատմամբ նախագծի շրջանակներում կստեղծվեն 70-ից ավելի աշխատատեղեր:



## «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները: 2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին:

*coaf.org*  
*coaf@coaf.org*  
+374 10 50 20 76



**About AMAA**

*The Armenian Missionary Association of America (AMAA) was founded on June 7, 1918 in Worcester, Massachusetts. Immediately after the devastating earthquake of 1988 in Armenia, the AMAA worked tirelessly to relieve the pain of those affected by the earthquake by providing food, clothing, medicine, and medical equipment.*

*In 1991, after the independence of Armenia and following the registration of the AMAA in Armenia, the new headquarters opened in Yerevan. Currently the AMAA operates from dozens of offices in various regions of the Republic of Armenia and Artsakh with more than 475 employees. The mission of AMAA Armenia is the promotion of the Armenian people's welfare. The organization strives to help them improve their lives by providing financial, medical, educational, spiritual, cultural and employment assistance. Since 1991 AMAA Armenia reached out to more than 100 000 beneficiaries in difficult life situations. The AMAA has a special focus on child welfare and education, however, it also maintains the integrity and quality of its services to other parts of society.*

*amaa.am  
info@amaa.am  
+374 10 54 35 76*